



Զաքարյան Գրեմա- այս անուն ազգանունը իր պատվավոր տեղն ունի անվանի բյուրեղավանդիների շարքում: Վաստակաշատ մանկավարժ, օրինակելի ընտանիքի հայր, մեծ հայրենասեր: Մարդ, ով ուրախանում է յուրաքանչյուրի աննշան հաջողությամբ, տխրում, երբ ինչ-որ մեկի մոտ ինչ-որ բան այնպես չէ, ափսոսում, յուրաքանչյուր հայրենիքից հեռացողի համար: Մարդ՝ մեծատառով: Ծնվել է Ղափանի շրջանի Շիշկերտ գյուղում՝ 1938թ-ին: Գյուղի յոթամյա դպրոցը ավարտելուց հետո 1957թվականին ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը, իսկ 1971 թ-ին՝ Երևանի մանկավարժական ինստիտուտը: 1957թ-ից սկսել է մանկավարժական գործունեությունը՝ դասավանդելով պատմություն ամարկան: 1968 թ-ից մինչև 2005-ը աշխատել է Բյուրեղավանի միջնակարգ դպրոցում, արժանացել «Ժողովրդական կրթության գերազանցիկ», «Ավագ մանկավարժ» կոչումների: 48 –ամյա մանկավարժական գործունեության ընթացքում բազմաթիվ սերունդներ է կրթել ու դաստիարակել: Նրա սաներից շատերը աշխատում են ամենատարբեր բնագավառներում: Հպարտության մեծ զգացումով է հիշում իր աշակերտներին՝ Արմեն Բենյամինով , Հակոբ Բալասյան, Լյովա Հարությունյան, Էդիկ Սանթրոսյան, Վարդան Ավետիսյան: Հայրենասիրության ոգով տոգորված Արցախյան ազատամարտին մասնակցած բոլոր բյուրեղավանցի երիտասարդներին դասավանդել են ընկեր Զաքարյան և ընկեր Ստեփանյան ամուսինները: Նրանց մի մասը վերադարձավ հաղթանակով, իսկ ռազմի դաշտում ընկածները փառքով պսակեցին իրենց անունները՝ բարձր պահելով սիրելի ուսուցչի և հայրենի քաղաքի պատիվը: Բարձրագույն կրթություն ստացած հինգ զավակներից երկուսը երաժիշտ-մանկավարժներ են, երկուսը՝ ինժեներներ, իսկ կրտսերը՝ նկարիչ: Առողջություն և արևշատություն քեզ, սիրելի Ուսուցիչ...

Հիշում է ընկեր Զաքարյանը.

Մի առիթով դպրոցում կազմակերպված միջոցառմանը հրավիրված էին դպրոցի շրջանավարտները: Միջոցառման վերջում անցկացվեց «վիկտորինա», որտեղ մասնակիցներից մեկին տրվեց հետևյալ հարցը.

-Ձեր ո՞ր ուսուցչի, ո՞ր խոսքն եք միշտ հիշում:

Նախկին աշակերտը պատասխանում է.

-Ընկեր Ջաքարյանի հետևյալ խոսքը «Երեխաներ, կյանքում ինչ մասնագիտություն էլ

որ ընտրեք, միշտ ՄԱՐԴ եղեք»: